

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N N «ՀՀ ԷԵԲՊՆ-2017-ՇՀԾՁԲ-15/3-2»**

ք. Երևան

<<28 >> մարտի 2017թ.

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Կ. Ղահրամանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ավտոդաս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Հովհաննեսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ անանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 537400 (հինգ հարյուր երեսուկոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով¹:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

¹ Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար փվյալ փարվա ընթացքում կհարկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում²:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ³:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

² Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

³ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Պատվիրատու

Կատարող

«Էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների
նախարարություն
ք. Երևան, Հանրապ. Հրապարակ
Կառավարական տուն 3
Հ/Հ 900011009074, 900011009082
«ՖՆ աշխատակազմի գործ. վարչություն
ՀՎՀՀ 02508219

«Ավտոդաս» ՍՊԸ
Ք. Երևան, Անդրանիկի 3/1
Հ/Հ 2050922008361001
«Ինտեկրանկ» ՓԲԸ Մալաթիա մ/ճ
ՀՎՀՀ 01807072

/ Աշխատակազմի ղեկավար



Կ. Ղաիրամանյան

Հովհաննեսյան

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

NN	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայտուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները)
		ըստ չափաբաժինների ²
		Չափաբաժին 2
		Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ 5 տեղանոց, 4 x 4 տիպի ավտոմեքենաներ /Վազ 2121, Շելլոլե Նիվա/
		ԱՊՀ անդամ երկրների արտադրության
1	2	3
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում	
1	Բռնկման համակարգի ստուգում	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0
3	Յուղման համակարգի ստուգում	0
4	Արտացման համակարգի ստուգում	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0
13	ABS համակարգի ստուգում	0
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0
16	Թափքի վիճակի ստուգում	0
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0
	SU-2 ներառվող ծառայությունների անվանում	
18	Շարժիչի հանում և տեղադրում	50000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	0
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
22	Շարժիչի վերանորոգում	20000
23	Նույնը DOHC դեպքում	0
24	Նույնը V6-ի դեպքում	0
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	5000
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	3000
27	Նույնը աջի համար (V6)	0

28	Նույնը ծախսի համար (V6)	0
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	20000
30	Նույնը աջի համար (V6)	0
31	Նույնը ծախսի համար (V6)	0
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	3000
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	5000
34	Փականի խցուկի փոխարինում	4000
35	Նույնը V6-ի դեպքում	0
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	4000
37	Նույնը V6-ի ծախսի դեպքում	0
38	Նույնը V6-ի աջի դեպքում	0
39	Նույնը DOHC դեպքում	0
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	4000
41	Հրիչների փոխարինում SOHC	0
42	Նույնը DOHC դեպքում	0
43	Ատամնավոր փոկի փոխարինում	8000
44	Նույնը DOHC դեպքում	0
45	Նույնը V6-ի դեպքում	0
46	Ծնկածն լիսեռի անցկի խցուկի փոխարինում	9000
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
48	Նույնը DOHC դեպքում	0
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
50	Նույնը V6-ի դեպքում	0
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
52	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	6000
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	5000
54	Մխոցային օդակների փոխարինում	3000
55	Նույնը DOHC դեպքում	0
56	Նույնը V6-ի դեպքում	0
57	Թափանիվի հանում և տեղադրում	3000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
58	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	500
59	Յուղի պոմպի փոխարինում	1000
60	Նույնը DOHC դեպքում	0
61	Նույնը V6-ի դեպքում	0
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	5000
63	Բռնկման կարգավորում	4000
64	CO կարգավորում	2500
65	խարնարակի հանում և տեղադրում	2000
66	խարնարակի վերանորոգում	2000
67	Օդի գտիչի փոխարինում	500
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	5000
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	3000
70	Բենզամղիչի փոխարինում	3000
71	Վառելիքի գտիչի փոխարինում	500
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	1000
73	Տրամյորի հանում և տեղադրում	1500
74	Տրամյորի վերանորոգում	2000
75	Յուղ շարժիչի, հանքային 1լ համար	500
76	Յուղ շարժիչի, սինթետիկ 1լ համար	1000
77	Յուղ շարժիչի, կիսասինթետիկ 1լ համար	1000
	3. Սառեցման և արտաձման համակարգ	
75	Հովհարի փոկի հանում և տեղադրում	1500

76	Հովհարի հանում և տեղադրում	1500
77	Ռադիատորի հանում և տեղադրում	2000
78	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
80	Ռադիատորի վերանորոգում	4000
81	Թերմոստատի փոխարինում	3000
82	Ջրի պոմպի փոխարինում	4000
83	Նույնը DOHC և V-6 դեպքում	0
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
85	Ջրի պոմպի վերանորոգում	5000
86	Նույնը DOHC դեպքում	0
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
88	Ընդարձակող բացի փոխարինում	3000
89	Խլարարի հանում և տեղադրում	4000
90	Նույնը DOHC դեպքում	0
91	Ռադիատորի փողոակի հանում և տեղադրում	2500
92	Հակասառիչ հեղուկ, խտությունը 40%, 1լ համար	1000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	2500
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	2000
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	4000
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	2000
96	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	1500
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	6000
98	ՓՏ-ի վերանորոգում	2000
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	1500
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	1500
101	Վազքայալի շարժաբերի փոխարինում	1000
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	1500
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	1000
104	Նույնը V6-ի համար	0
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	5000
106	Նույնը V6-ի համար	0
107	ԱՓՏ-ի վերանորոգում	4000
108	Նույնը V6-ի համար	0
109	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	3000
	5. Բաշխիչ տուպի, կարդանային լիսեռ	
110	Բաշխիչ տուպի հանում և տեղադրում	2000
111	Բաշխիչ տուպի հանում և տեղադրում վերանորոգումով	4000
112	Բաշխիչ տուպի խցուկի փոխարինում	3000
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	2500
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	3000
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	2000
116	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	1500
	6. Առջևի և հետևի կամրջակներ	
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	2500
118	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում	6000
119	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի	4000

	քանդում և հավաքում	
120	Առջևի կամ հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում	3000
121	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	2000
	7. Կախոց	
122	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	4000
123	Տրավերսի հանում և տեղադրում	2500
124	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	2000
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	2000
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	1500
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	2500
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	2000
129	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	1000
130	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	1000
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	1000
132	Հսպանակի հանում և տեղադրում	1200
133	Հսպակի հանում և տեղադրում	1000
134	Հսպակի վռանների փոխարինում	1000
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1500
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում	1000
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում	1000
138	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	1200
139	Միջին ձգանի հանում և տեղադրում	1000
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	1200
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	1500
142	Վերևի լծակի վռանների փոխարինում	1000
143	Գնդե հողակապերի փոխարինում	1500
144	Ծայրակայների հանում և տեղադրում	2000
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	1500
146	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	1000
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	1000
148	Հետևի զսպանակի փոխարինում	1000
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1000
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	1500
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	1500
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	2000
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	2000
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	2500
155	Անվաքացքի կարագավորում	3000
156	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	1500
	8. Ղեկային մեխանիզմ	
157	Ղեկային կայունի հանում և տեղադրում	3000
158	Նույնը V6-ի համար	
159	Ղեկային կայունի վերանորոգում	5000
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	4000
161	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	3500

162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	4000
163	Նույնը DOHC դեպքում	0
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	3000
165	Նույնը DOHC դեպքում	0
166	Հիդրոուժեղարարի փողոսիկի հանում և տեղադրում	2000
167	Նույնը DOHC դեպքում	0
168	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	0
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	0
	9. Արգելակային համակարգ	
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	3500
172	Գլխ. գլանի վերանորոգում	4000
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	3000
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում	3000
175	Բանվ. գլանի վերանորոգում	2500
176	Արգելակային համակարգի օդահանում	2000
177	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	2000
178	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	1500
179	Առջևի սուպպորտի վերանորոգում	3000
180	Հետևի սուպպորտի վերանորոգում	3500
181	Արգելակային փողոսիկի փոխարինում	2000
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	2500
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	2000
184	Հետևի կոճղակների փոխարինում	2500
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	2000
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	1500
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	2000
188	ABS-ի հանում և տեղադրում	3000
189	ABS-ի վերանորոգում	4000
190	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	4000
191	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	3500
	10. Էլեկտրասարքավորում	
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում	3000
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	4000
194	Գններատորի հանում և տեղադրում	2500
195	Նույնը V6-ի դեպքում	0
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	0
197	Գններատորի վերանորոգում	5000
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում	2000
199	Մեկնարկիչի վերանորոգում	3000
200	Առջևի լապտերի հանում և տեղադրում	1500
201	Հետևի լապտերի հանում և տեղադրում	1000
202	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	1500
203	Վազքաչափի հանում և տեղադրում	1500
204	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	1200
205	Սաքերի պանելի հանում և տեղադրում	2000

206	Արագաչափի հանում և տեղադրում	2000
207	Ազդանշանի հանում և տեղադրում	3000
208	Ապակեվացիչի շարժիչի հանում և տեղադրում	2500
209	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	2000
210	Ազդանշաային համակարգի տեղադրում	2000
211	Մագնիստոյաի տեղադրում	1500
212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	2500
213	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	2000
214	Էլ/հաղորդալարերի հիմնական խուփցի հանում և տեղադրում	2000
215	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուփցի հանում և տեղադրում	1500
216	Էլեկտրական սովիչների փոխարինում	1500
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1500
218	Վառոցքի մոմերի փոխարինում	5000
219	Կոնդիցիոների լիցքավորում	2000
220	Կոնդիցիոների վերանորոգում	0
	11. Այլ ծառայություններ	
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում	0
222	Ավտոմեքենայի լվացում	0
223	Անիվի հանում և տեղադրում	0
224	Անվաղողի վերանորոգում	0
225	Անիվի բայանսավորում	0
226	Անիվի վալց	0
227	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	0
228	Խառատային աշխատանքներ	3000
229	Փականագործի աշխատանքներ	0
230	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	0
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ 5 տեղանոց, 4 x 4 տիպի ավտոմեքենաներ /Վազ 2121, Շելլոլե Լիվա/
	1. Շարժիչ	
1	Շարժիչի բլոկ	5000
2	Շարժիչի գլխիկ	0
3	Բարձիկ	1000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	1500
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	2500
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	0
7	Շարժիչի փական դուրս մղող	0
8	Շարժիչի փական ներս մղող	0
9	Շարժիչի փականի խցուկ	0
10	Ծնկաձև լիսեռ	0
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	0
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	0
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	0
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	0
15	Հենակային տափողակ	0
16	Մխոց	0
17	Մխոցային օղակներ	0
18	Ատամնանիվ	0
19	Ատամնավոր փոկ	0
20	Շղթա	0
21	Հիդրոձգան	0

22	Հրիչ	0
23	Հիդրոհրիչ	0
24	Բաշմակ	0
25	Հանգստարար	0
26	Թափանիվ	0
27	Թափանիվի պսակ	0
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	0
29	Շկիվ	0
30	Շարժաթև	1000
31	Կարտերի միջադիր	0
32	Միջադիր	1000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
33	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	900
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	1000
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	1500
36	Յուղի զտիչ	500
37	Յուղի պոմպ	800
38	Յուղի պոմպի շարժաքեր	1000
39	Յուղի ռադիատոր	1500
40	Յուղի փողրակ	0
41	Յուղի ծորակ	0
42	Վառոցքի մոմ	1000
43	Բենզոբաք	0
44	Խառնարակ	1500
45	Խառնարակի վերանորոգման հավաքածու	0
46	Ինժեկտորի ֆորսունկա	0
47	Վառելանյութի մղիչ էլեկտրական	0
48	Վառելանյութի մղիչ մեխանիկական	0
49	Վառելանյութի զտիչ	0
50	Վառելանյութի զտիչ Նուրբ մաքրման	0
51	Վառելանյութի փողրակ	0
52	Աքսելերատորի ճուպան	0
53	Օդի զտիչ	1000
54	Ջերմաստիճանային տվիչ	0
55	Յուղի տվիչ	0
56	Բաշխիչ լիսեռի տվիչ	0
57	Օդի ծախսի տվիչ	0
58	Արագաչափի տվիչ	0
59	Հովհարի տվիչ	0
60	Ջրի տվիչ	0
61	Բենզոբաքի տվիչ	0
62	Մարման ընթացքի կարգավորիչ	0
63	Մարման ընթացքի տվիչ	0
64	Ղեկավարման համակարգիչ	0
65	Պարապ ընթացքի տվիչ	0
66	Դրոսելային փականի տվիչ	0
67	Թթվածնի տվիչ	0
	3. Սառեցման և արտաձման համակարգ	
68	Հովհարի փոկ	0
69	Հովհար	0
70	Ռադիատոր	15000
71	Ընդարձակող բաք	0
72	Ռադիատորի փողրակ	0
73	Թերմոստատ	0
74	Ջրի պոմպ	0
75	Ջրի պոմպի առանցքակալ	0

76	Ջրի պոմպի թևակ	0
77	Սառեցման հեղուկ 1 լիտր	0
78	Ջրի պոմպի սունանիվ	0
79	Հոլովակ	0
80	Փոկ	0
81	Փոկ կոնդիցիոների	0
82	Ծորակ	0
83	Խլարարի ներդիր	0
84	Խլարարի կախոց	0
85	Կրոնշտեյն	0
86	Անուր (Իսամուտ)	0
87	Խլարար	0
88	Ռեզոնատոր	0
89	Վառարանի ռադիատոր	0
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
90	Կցորդման բանվորական գլան	0
91	Կցորդման գլխավոր գլան	0
92	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	0
93	Կցորդման տանող սկավառակ	0
94	Կցորդման տարվող սկավառակ	0
95	Կցորդման առանցքակալ	0
96	Կցորդման փողրակ	0
97	Փոխանցման տուփ	0
98	ՓՏ-ի առջևի խցուկ	0
99	ՓՏ-ի հետևի խցուկ	0
100	ՓՏ-ի առանցքակալ	0
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	0
103	ՓՏ-ի եղանիկ	0
104	ՓՏ-ի ատամնանիվ	0
105	Համաժամիչ	0
106	Մուֆտ	0
107	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	0
108	ԱՓՏ-ի գտիչ	0
109	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	0
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	0
111	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	0
112	ԱՓՏ յուղ, 1 լիտր	0
113	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0
114	Հերմետիկ	0
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
115	Բաշխիչ տուփ	0
116	Բաշխիչ տուփի խցուկ	0
117	Բաշխիչ տուփի առանցքակալ	0
118	Բաշխիչ տուփի ատամնանիվ	0
119	Բաշխիչ տուփի լիսեռ	0
120	Կարդանային լիսեռ	0
121	Էլաստիկ մուֆտ	0
122	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	0
123	Կարդանային լիսեռի խաչուկ	0
	6. Առջևի և հետևի կամրջակներ	
124	Հետևի կամ առջևի կամրջակ	0
125	Ռեդուկտոր	0
126	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	0
127	Դիֆֆերենցիալ	0

128	Դիֆֆերենցիալի սատելլիտ	0
129	Տանող ատամնանիվի խցուկ	0
130	Տանող ատամնանիվի առանցքակալ	0
131	Դիֆֆերենցիալի առանցքակալ	0
132	Կիսատնի	0
133	Կիսատնու առանցքակալ	0
134	Կիսատնու միջադիր	0
135	Կիսատնու խցուկ	0
136	Կարգավորիչ տափողակ	0
	7. Կախոց	
137	Տրավերս	0
138	Կրոնշտեյն	0
139	Ձախ կամ աջ հողակալ	0
140	Ձախ կամ աջ հողակալի փոշեթիկնոց	0
141	Անվակունդ	0
142	Անվակունդի խցուկ	0
143	Անվակունդի ներքին առանցքակալ	0
144	Անվակունդի արտաքին առանցքակալ	0
145	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	0
146	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	0
147	Ձախ կամ աջ հողակալի խցուկ	0
148	Հարվածամեղմիչի թասակ	0
149	Ջսպանակ	0
150	Առջևի հարվածամեղմիչ	0
151	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	0
152	Հարվածամեղմիչի վռան	0
153	Ներքևի լծակ	0
154	Ներքևի լծակի վռան	0
155	Վերևի լծակ	2000
156	Վերևի լծակի վռան	0
157	Գնդե հողակալ	0
158	Առջևի կայունարար	0
159	Առջևի կայունարարի վռան	0
160	Առջևի կայունարարի առջևի վռան	0
161	Հետևի զսպանակ	0
162	Հետևի ցնցամեղմիչ	0
163	Հետևի մետաղաձող (շտանգա)	0
164	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	0
165	Հետևի անկյունազծային լծակ	0
166	Անկյունազծային լծակի վռան	0
167	Ջսպակ (ոեստորա)	0
168	Ջսպակի վռան	0
169	Ջսպակի միջադիր	0
170	Ջսպակի բռնիչ	0
171	Աջ կամ ձախ ձգան	0
172	Ծայրակալ	0
173	Ձգան մեջտեղի	0
174	Անվահեծ	0
	8. Ղեկային մեխանիզմ	
175	Ղեկային կալուն	0
176	Ղեկային կալունի առանցքակալ	0
177	Ղեկային կալունի խաչուկ	0
178	Հիդրոուժեղարար	0
179	Հիդրոուժեղարարի փոկ	0
180	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	0

181	Հիդրոուժեղարարի պոմպ	0
182	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	0
183	Ղեկային ձող	0
184	Ղեկային ձողի ծայրակալ	0
185	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	0
186	Ճոճանակ	0
187	Ճոճանակի վրան	0
	7. Արգելակային համակարգ	
188	Գլխ. գլան	0
189	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	3000
190	Վակուումային ուժեղարար	0
191	Բանվ. գլան	0
192	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0
193	Արգելակային փողորակ	0
194	Սոպպորտի ուղղորդիչ	0
195	Սոպպորտի մանձեռ	0
196	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	0
197	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	0
198	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	0
199	Առջևի արգելակային սկավառակ	0
200	Հետևի արգելակային սկավառակ	0
201	Ձեռքի արգելակի ճոպան	0
202	ABS-ի տվիչ	0
203	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	0
204	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	0
205	Ձեռքի արգելակի ճոպան	0
	9. Էլեկտրասարքավորում	
206	Գններատոր	0
207	Գններատորի դիոդային կամրջակ	0
208	Գններատորի ռեյե	0
209	Գններատորի առանցքակալ	2400
210	Ստարտեր	0
211	Ստարտերի ռեյե	0
212	Ստարտերի ածուխ	0
213	Բենդեքս	0
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	0
215	Առջևի լապտեր	0
216	Առջևի թարթիչ	0
217	Հետևի լապտեր	0
218	Հետևի թարթիչ	0
219	Արգելակային լապտեր	0
220	Լամպ	0
221	Էլեկտրական անջատիչ	0
222	Էլեկտրական տվիչ	0
223	Էլեկտրական չափիչ սարք	0
224	Բռնկման կողպեք	0
225	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	0
226	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	0
227	Վառոցքային լարերի խուրց	0
228	Վառոցքի մոմի ծայրակալ	0
229	Վազքաչափ	0
230	Վազքաչափի ճոպան	0
231	Արագաչափ	0

232	Ազդանշան	0
233	Ապակեվազիչ	0
234	Ապակեվազիչի շարժիչ	0
235	Դռների կենտրոնական փական	0
236	Ազդանշային համակարգ	0
237	Մագնիտոլա	0
238	Էլեկտրամբարձիչ	0
239	Էլեկտրամբարձիչի շարժիչ	0
240	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	0
Ծառայության մատուցման ժամկետը		
Սկիզբը		ավարտը
Պայմանագրի կնքման պահից		20.12.2017թ.

1 - պարտադիր պայման է օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի չօգտագործված լինելը

2 - Տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում

3- պարտադիր պայման է հանդիսանում մինչև ավտոմեքենայի վերանորոգումը տրամադրել տեղեկանք ավտոմեքենայի անսարքության և վերանորոգման համար պահանջվող գումարի մասին

Պատվիրատու

Կատարող


«Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն

ք. Երևան, Հանրապ. Հրապարակ Կառավարական տուն 3

Հ/Հ 900011009074, 900011009082

«ՖՆ աշխատակազմի գործ. վարչություն
ՀՎՀՀ 02508219


/ Աշխատակազմի ղեկավար՝



Կ. Ղահրամանյան

«Ավտոդաս» ՍՊԸ
Ք. Երևան, Անդրանիկի 3/1
Հ/Հ 2050922008361001

«Ինեկորանկ» ՓԲԸ Մալաթիա մ/6
ՀՎՀՀ 01807072



Ս. Հովհաննեսյան

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Q/h	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
Նախարարի աշխատակազմ														
2	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ 5 տեղանոց, 4 x 4 տիպի ավտոմեքենաներ /Վազ 2121, Շելյուե Նիվա/	-	-	40305	141068	141068	141068	262000	262000	262000	403050	403050	403050	403050
Նախարարության աշխատակազմ														
2	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ 5 տեղանոց, 4 x 4 տիպի ավտոմեքենաներ /Վազ 2121, Շելյուե Նիվա/	-	-	3435	47022	47022	47022	87400	87400	87400	134350	134350	134350	134350

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

Պատվիրատու

Կատարող

<< Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
 ք. Երևան, Հանրապ. Հրապարակ
 Կառավարական տուն 3
 Հ/Հ 900011009074, 900011009082


<<Ավտոդաս>> ՍՊԸ
 ք. Երևան, Անդրանիկի 3/1
 Հ/Հ 2050922008361001
 <<Ինտելորանկ>> ՓԲԸ Մալաթիա մ/6
 ՀՎՀՀ 01807072

<< ՖՆ աշխատակազմի գործ. վարչություն
 ՀՎՀՀ 02508219

/Աշխատակազմի ղեկավար՝

Կ. Ղաիրամյան

Ս. Հովհաննեսյան



Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՆ-ՆՆԴՈՒՄԱՆ

« » « » 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «Պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման» պետական գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «մարտ» 2017 թ.

Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս << Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի քարտուղարության տնտեսական բաժնի պետ՝ Վ. Բարսեղյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ << Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և

(Պատվիրատուի անունը)
_____ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ. _____-ին կնքված N _____

(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. _____ -- -ին հանձնման-
ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն